

ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԵՈՒՐՁ

Խ. Ս. ՄԱՍԵԱԿԱՆՅԱՆ

Գրավոր խոսքում կետադրության բոլոր նշանների կիրառության հստակ կանոնարկումն ու հանրայնորեն միասնականացումը տվյալ լեզվի գրավոր տարբերակի զարգացածության վկայություններից են, նույն լեզվով հաղորդակցվող ժողովրդի քաղաքակրթվածության չափանիշները:

Թեև հայերենն ունի բավական հարուստ և կիրառություններով հանրայնորեն ճանաչված կետադրության լիարժեք համակարգ, բայց այն, որպես գիտակարգ, այժմ դուրս է մնացել գիտության տեսադաշտից: Նախ՝ համակողմանիորեն չեն ուսումնասիրված հայերենի կետադրության նշանների կիրառության բոլոր սկզբունքները, հանրայնորեն չեն ընդհանրացած, բազմաթիվ սկզբունքներ դուրս են մնացել համակարգումից, հետևապես չեն կանոնարկվել, երբեմն էլ սահմանումների անորոշություններն են խանգարում կիրառությունների միասնականացմանը:

Լեռո՝ անգամ կանոնարկված սկզբունքները չեն հսկվում ո՛չ գիտականորեն, ո՛չ էլ պետականորեն այնպես, որ գոնե իրենց կիրառություններով համընդհանուր ճանաչում գտած կետադրական նշանները գործածվեն կանոնարկված միասնական սկզբունքներով: Ստեղծվել է համարյա թողտվության իրավիճակ, երբ ով ինչպես ցանկանում է, այնպես էլ կետադրում է իր գրավոր խոսքը:

Կետադրության նշանների սխալ ու ոչ միասնական կիրառությունները իրենց հախուռն առատությամբ սփռված են դպրոցական դասագրքերում, դիմորդների ու բուհական ուսանողության համար կազմված թելադրությունների ժողովածուներում, ուսուցիչներին հասցեագրված ձեռնարկներում, առօրյա մամուլի էջերում և զանգվածային տպաքանակով հրատարակվող գիտական ու գեղարվեստական գրականության մեջ:

Հայերենի կետադրության նշանների սխալ, ոչ տեղին, անհարկի կիրառությունները հետևանք են մի շարք պատճառների.

1. դեռևս հստակորեն ճշգրտված չեն կետադրության նշանների կիրառության բոլոր սկզբունքները, հետևապես չեն սահմանված ու կանոնարկված:

2. Կետադրության հարցերով զբաղվող բանասերներն ու լեզվաբանները, կետադրության նշանների բազմաթիվ կիրառությունների վերաբերյալ հակամետ կարծիքներ ձևակերպելով հանդերձ, աշխատել են, որքան հնարավոր է, յուրաքանչյուրն իր դիրքորոշմամբ ու ինքնատիպ սահմանել-կանոնարկել կետադրության նշանների կիրառությունները: Այսինքն՝ առհասարակ բացակայում է միասնականացման ձգտումը, և, բնականաբար, յուրաքանչյուր նախորդի կողմից հաջողված գիտական կանոնարկումները, որոնցից առավել հիմնավորվածները նույնիսկ գիտական նվաճումներ պիտի ճանաչվեն, անտեսվել են հաջորդների կողմից. փոխարենը փողահարվել է ինքնահանար և օրինաչափությունից շեղված «սահմանումը»: Լեռևանքը՝ հաճախ ընթերցում ենք իմաստագուրկ բառախաղ, քան սահմանում:

Թեև աննախընթաց վերելք է ապրել հայ լեզվաբանությունը. առանձնապես վերջին տասնամյակներում հրապարակվել են հայերենի գիտական քերա-

կանության համարյա բոլոր գիտաճյուղերի ուղղությամբ ամբողջական ու հիմնարար մենագրություններ (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն և ուղղագրություն, բառակապակցության և նախադասության շարահյուսության գիտակարգերի ուղղություններով), բայց առայժմ գիտական հիմնավոր, սահմանազատող բնորոշումներով չեն մեկնաբանված լեզու-մտածողություն-խոսք հասկացությունները: Հատակորեն չեն բնորոշված խոսքի տեսակները. ոմանք ավանդաբար ընդունում և անվանում են խոսքի միմիայն երկու տարբերակները՝ բանավոր և գրավոր, ուրիշները՝ այդ երկու տարբերակներից բացի, ընդունում են նաև ներքին խոսք, որպես անառարկելի իրողություն:

Լիակատար հստակությամբ չեն բնութագրված խոսք և ոճ ըմբռնումները, թեև այդ առումով առկա է ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանի դրույթային սահմանումը. «Ոճը մտքերն արտահայտելու համար ընտրվող լեզվական միջոցների ու եղանակների տարբերությունն է»:

Այսքան հստակ ու մեկին բանաձևումից հետո էլ ոճը ներկայացվում է «լեզու» կամ «խոսք» հասկացությունների փոխարեն, այլապես ինչպե՞ս հասկանալ «Առօրյա խոսակցական ոճ», «Վարչագործարարական ոճ», «Հրապարակախոսական ոճ» և այլն, փոխանակ ասելու՝ «Առօրյա խոսակցական ոճով կառուցված խոսք», «Հրապարակախոսական ոճով կառուցված խոսք» և այլն, որովհետև ոճը խոսքային հատկանիշ է, ոչ թե անվանողական միավոր:

Բացի դրանից, միանգամայն պարադոքսալ է հնչյուն թվացյալ այն իրողությունը, թե ոճաբանության ու շարահյուսության օրինաչափությունները կարելի է մեկնաբանել առանց կետադրության նշանների կիրառության սկզբունքներին զուգակցելու: Դա նման է այն բանին, որ շարահյուսության դասագիրք գրքի բանավոր խոսքի հիման վրա:

Ասեմք նաև, որ հայերենի գիտական շարահյուսությունը կանգ է առել նախադասության շարահյուսության մակարդակի վրա. անհրաժեշտաբար ծառացած է ամբողջական խոսքի ընդգրկուն շարահյուսության մշակման խնդիրը:

Լեզվաբանության մեջ ընդունված է լեզվի նվազագույն միավորը համարել հնչյունը (իմա՝ հնչույթը): Հնչույթը լեզվական անվանողական միավոր է, ինչպես բառը, բառակապակցությունը, նախադասությունը, խոսքը: Յուրաքանչյուր հնչույթ ունի իրեն անվանող գրապատկերը, որը կոչվում է տառ: Ձևաիմաստային կապով մեկնաբանելով՝ ա տառը ձևն է, քանզի ա-ն կարող էր ունենալ 4 կամ 5 ճյուղեր և դարձյալ ա անվանվել: Իմաստը հնչույթն է: Հենց այդ բանալիով էլ մոտենանք լեզու-մտածողություն-խոսք հասկացությունների մեկնաբանմանը: Մինչև օրս տեսական և ուսումնական գրականության մեջ ոչ միայն չկան հստակ սահմանումներ, այլև առկա է բացահայտ շփոթ, հաճախ դրանք գործածվում են մեկը մյուսի փոխարեն:

Լեզուն բառօգտագործման իր ողջ գիճանոցով միայն միջոցն է, մտածողությունը՝ եղանակը, խոսքը՝ արդյունքը, իսկ ոճը խոսքի դրսևորման հատկանիշներից է, ուստի դրանք երբեք չպետք է շփոթել:

Բանավոր խոսքում ոճական հատկանիշները դրսևորվում են բազմազան հնչերանգներով, իսկ գրավոր խոսքում նույն հնչերանգային ոճական դրսևորումները գրավորվում են կետադրական նշաններով: Այսքանից հետո հստակորեն պարզ է, որ ինչպես այբուբենի տառերը, այնպես էլ կետադրության նշանները ձևեր են, որոնք ունեն իրենց տարբերակիչ առանձնահատկությունները: Ընդ որում, եթե տառերն անվանողական դեր ունեն, այսինքն՝ գործածվում են՝ անվանելու լեզվական նվազագույն միավորները՝ հնչույթները, ապա կետադրության նշաններն անվանելու ոչինչ չունեն, այլ կիրառվում են՝ միայն հուշելու համար հատկանիշների ոճական կիրառությունները:

Կետադրական նշաններով հուշվում են նաև խոսքային բաղադրիչ միավորների ոճական բազմազան դրսևորումները՝ տրոհական, առոգանական, ա-

սելիքին կողմնակիորեն աղերսվող կրճատումները, թերասացությունները, պարզաբանում-մեկնություն-մտահանգումները: Կրկնում ենք՝ ոչ անվանողաբար, այլ՝ պայմանանշանային հուշումներով:

Այսպիսով՝ խոսքի հնչերանգային և շարահյուսական միավորների ոճական կիրառության պայմանական գրառումների ամբողջությունը տվյալ լեզվի կետադրության համակարգն է:

Հայերենի շարահյուսության դասագրքերում և գիտամեթոդական ուղեցույցներում խոսք անգամ չկա այն մասին, որ բազմատեսակ ու բազմաճյուղ ճախադասությունները, իրենց բազմատեսակ կազմիչներով հանդերձ, խոսքի բաղադրիչ միավորներ են և խոսքային հյուսվածքում ձևավորում են միմիայն ոճական նշանակություններով:

Քերականության դասագրքերում և գիտամեթոդական ուղեցույց աշխատություններում անհրաժեշտ հստակությամբ չեն մեկնաբանվում նաև պարբերություն և պարբերությո շարահյուսական հասկացությունները. հաճախ դրանք ևս շփոթվում են մեկը մյուսի հետ. որոշակի կանոնարկումներ չկան դրանց կետադրության վերաբերյալ:

Պարբերությոը և պարբերությունը խոսքի շարահյուսական բաղադրիչ միավորներ են, բայց ձևավորման սկզբունքներով արմատապես տարբերակված են, և միմյանց հետ շփոթելու ոչ մի հիմք չկա:

Որպես ամբողջական խոսքի շարահյուսական բաղադրիչ միավորի, պարբերությոին յուրահատուկ է ներքին ուժովը. իր բաղադրիչ միավորների (անդամներ՝ Մ. Արեղյանի անվանումն է) ներդաշնակ համապատասխանությունը:

Եթե բանավոր խոսքում այդ ուժովը կարգավորվում է համապատասխան հնչերանգներով, ապա գրավոր խոսքում գրավորվում է պայմանական նշաններով, այսինքն՝ կետադրությամբ: Չպահպանել հնչերանգը, նշանակում է ավերել պարբերությո-կառույցը: Որպեսզի գրավորված պարբերությոն ընթերցվի հաճույքով և ունենա ներգործուն ուժ, այն պետք է կետադրվի միասնական սկզբունքներով: Հնարավոր է, լինեն ներքին զգացողությամբ օժտված ընթերցողներ, որոնք ըստ էության կարիք չզգան կետադրության, բայց ընթերցողին, ընդհանրապես, պետք է հուշի միասնական սկզբունքներով կանոնարկված կետադրությունը:

Ասվածը հիմնավորենք հետևյալ ցայտուն օրինակով: Վերցնենք IV դասարանի հայոց լեզվի դասագիրքը: I-III դասարաններում ձեռքբերված շարահյուսական տարրական գիտելիքները խորացնելու և ամրակայելու նպատակով կրկնվում է «Պարզ ճախադասություն» ընդհանուր թեման: Դասագրքում որպես բնագրային օրինակ է զետեղվել տարվա եղանակներին նվիրված Ղ. Աղայանի հայտնի ոտանավորից մեկ հատված.

1. Օրն է կարճանում:
2. Ծառն է մերկանում:
3. Անձրևն է մաղում:
4. Քամի է խաղում:
5. Այդ ե՞րբ է լինում:

Եթե ուշադիր ընթերցենք 5 - տողանի այս շքեղ պարբերությոը, ապա կտեսնենք, որ հեղինակի կողմից այն կետադրվել է ոչ ճիշտ ձևով: Այն հնչերանգով ավարտուն շարահյուսական մեկ միավոր է՝ շարահարությամբ զոդված հինգ բաղադրիչներով համադասություն, որն առաջինից չորրորդ անդամներով ներփակվում է հարցապնդող 5-րդ բաղադրիչով, այն է՝ «Այդ ե՞րբ է լինում» եզրափակիչ ճախադասությունը: Ընդհանուր պատասխանը մեկն է՝ աշնանը:

Բայց եթե առաջնորդվենք հեղինակի կետադրման տրամաբանությամբ, այսինքն՝ ոտանավորի յուրաքանչյուր տողը դիտենք հնչերանգով ավարտուն մեկ ճախադասություն, որովհետև բոլոր տողերը տրոհել է վերջակետով, ապա

կատացվի, որ եզրափակիչ նախադասության հարցապնդումն ուղղված է յուրաքանչյուր տողին՝ առանձին-առանձին: Ի՞նչ կատացվի արդյունքում.

ա) կչքանա աշնան կոլորիտը,

բ) պատասխանները կհնչեն անտրամաբանական ու կեղծ:

Ահա՛

1. Օրն է կարճանում: Այդ ե՞րբ է լինում: Աշնանը և ձմռանը:

2. Ծառն է մերկանում: Այդ ե՞րբ է լինում: Աշնանը և ձմռանը:

3. Անձրև է մաղում: Այդ ե՞րբ է լինում: Գարնանը, ամռանը և աշնանը:

4. Քամի է խաղում: Այդ ե՞րբ է լինում: Գարնանը, ամռանը, աշնանը և ձմռանը:

Բայց չէ՞ որ անվանի մանկավարժ և բազմաթիվ դասագրքերի հեղինակ Ղ. Աղայանը տվյալ ոտանավորը գրել է դեռահասների աշխարհաճանաչողությունն ընդլայնելու՝ խոսքային կոլորիտով տարվա չորս եղանակները ճանաչել տալու միտումով: Պետք է ընդունել, որ ոտանավորի չորս տներից յուրաքանչյուրը հնչերանգով ավարտուն մեկական միավոր է՝ պարբերությ, իսկ բերված հատվածը ճիշտ կետադրությամբ կունենա հետևյալ տեսքը.

Օրն է կարճանում.

Ծառն է մերկանում.

Անձրևն է մաղում.

Քամի է խաղում.

-Այդ ե՞րբ է լինում: (Աշնանը)

Այո՛, աշնան կոլորիտն ամբողջանում է բնության աստիճանական փոփոխման և անբաժան միասնությամբ միայն: Բերված օրինակի հիման վրա կարող ենք անել հետևյալ եզրակացությունը. *վերջակետը խոսքային բաղադրիչները՝ նախադասությունները, միմյանցից տրոհելու, իսկ միջակետը խոսքի բաղադրիչի՝ բարդ նախադասության բաղադրիչները տրոհելու կետադրման նշանն է*. հետևապես ճիշտ չեն բոլոր այն հեղինակները, ովքեր բանաձևում ու պնդում են, թե վերջակետը, միջակետը և ստորակետը կարող են ազատ փոխարինել (փոխանակել) միմյանց:

Օքեղաշուք պարբերությունը են կերտվել Հովհ. Հովհաննիսյանի, Վ. Տերյանի, Հովհ. Թումանյանի, Ե. Չարենցի պոետական հյուսվածքներում:

Ահա՛

1. Սրընթաց պախրա՞, թե գայլ գիշատիչ

Ծեշտակի անցավ փարախի մոտով,

2. Այծյամը հանկարծ մոտակա ժայռից

Անդունդը մի քար գլորեց ոտով,

3. Գիշերվա հովից տերևն է դողում,

4. Երկչոտ մուկիկը վազեց պուճախում,

5. Թե՞ ոչխարների թույլ մնչոցն էր այն,-

6. Սաքոյին թվաց, թե մի ոտնաձայն

Եկավ կանգնեց փարախի վրա,

կանգնեց ու լռեց...

Պոետական այս պարբերությոը վեց անդամ ունի, որոնցից առաջին հինգ անդամները համադաս ու համագոր են անկախությամբ, բայց ներքին անբաժան միասնությամբ ենթադրում են միևնույն ընդհանրացնող մտահանգումը՝ «Սաքոյին թվաց, թե մի ոտնաձայն եկավ կանգնեց փարախի վրա, կանգնեց և լռեց...»:

Պարբերության պոետական հմայքը պայմանավորված է հնչերանգով ոճավորված ուղեգրությամբ, համադասության բաղադրիչների համաչափությամբ և մտահանգող-ամփոփող վերջին բաղադրիչի՝ տրամաբանական ընդգրկուն ընդհանրացմամբ:

Նկատենք նաև՝ Հովհաննես Թումանյանի շքեղաշուք այս պարբերության անդամների տրոհման ճիշտ նշանը միջակետն է:

Պարբերություն: Օտարահյուսական առանձնահատկություններով պարբերությանը շատ է տարբերվում պարբերությունը:

Անժխտելի է, որ ինչպես բանավոր, այնպես էլ գրավորված խոսքն ամբողջանում է դատողություններով: Դատողություններ կան, որոնք պարզ են ու մեկին: լրացուցիչ պարզաբանման կարիք չունեն: Կան դատողություններ, որոնք անհրաժեշտաբար պարզաբանվում են լրացուցիչ մտքերով՝ հնչերանգով ավարտված առանձին նախադասությամբ կամ նախադասություններով:

Հետևաբար, եթե ամբողջական խոսքի կառուցում բոլոր դատողությունները նախադասություններ են, ապա բոլոր նախադասությունները դատողություններ չեն: Պարբերության հիմքում ընկած է որևէ դատողություն, որի լրացուցիչ մեկնության-պարզաբանման առնչություններով ձևավորվում են հնչերանգով ավարտված ուրիշ նախադասություններ: Այնտեղ է ավարտվում պարբերությունը, ուր ավարտվում է տվյալ դատողության պարզաբանումը:

Հաջորդ պարբերությունը պարտադիր գրվում է նոր տողից և հնարավոր է, որ լրացուցիչ պարզաբանման կարիք չունենա:

Նկատենք նաև՝ ինչպես պարբերությո՞ւն, այնպես էլ պարբերությունը գերազանցապես գրավոր խոսքի երևույթներ են: Խոսքի կառուցում ձևավորվում են հնչերանգային ու շարահյուսական ոճավորման միանգամայն տարբեր առանձնահատկություններով, ուստի կետադրվում են տարբեր սկզբունքներով:

Ա. Պարբերությո՞ւն հնչերանգով ավարտուն շարահյուսական մեկ ամբողջական միավոր է, հետևապես վերջակետով կամ կախման կետով մեկ տրոհում ունի:

Բ. Պարբերությունը խոսքի հատվածային, բայց դարձյալ ամբողջական միավոր է, որը կարող է ընդգրկել հնչերանգով ավարտուն, վերջակետով կամ կախման կետով տրոհվող մի շարք նախադասություններ:

Ուրեմն՝ տրոհության նշաններից վերջակետը (երբեմն էլ՝ կախման կետը) խոսքի շարահյուսական բաղադրիչները տրոհող նշան է, իսկ միջակետը, ստորակետը և բութը նախադասության շարահյուսական բաղադրիչ միավորները տրոհող նշաններ են: Այստեղից մի ուրիշ հետևություն. պարբերության շարահյուսական առանձնահատկություններն ուսումնասիրվում են նախադասության շարահյուսության ոլորտում, իսկ պարբերության շարահյուսական առանձնահատկությունները պետք է ուսումնասիրվեն խոսքի շարահյուսական մակարդակում:

Դպրոցում, և ոչ միայն դպրոցում, դերբայական դարձվածի ուսուցումը նախկինում հանձնարարվում ու տարվում էր մույն եղանակներով, այսինքն՝ ստորադասությունները պարզեցնելով (երկրորդական նախադասությունների կրճատմամբ) դերբայական դարձվածներ էին ձևավորվում և մտան մտավարժություններով էլ որոշվում էր երկրորդական նախադասությունների բնույթը: Դա դիտվում էր ուսուցման գերնպատակ, իսկ վարժանքներով ձևավորված հիմնությունները գնահատվում էին որպես շարահյուսության իմացության չափանիշ կամ մայրենի լեզվի ուսուցման արդյունք...

Ամփոփենք:

1. Հայերենն ունի հանրայնորեն ճանաչված և կիրառություններով ընդհանրացած կետադրության համակարգ, որը միանգամայն լիարժեք ձևով գրավորում է մեր ազգային լեզվամտածողությանը բնորոշ հնչերանգային ու շարահյուսական իրողությունների ոճական կիրառությունները:

2. Համակարգում եղած յուրաքանչյուր նշան իր որոշակի ու տարբերակված կիրառություններն ունի: Հիմնովին մերժելի են այն բոլոր կարծիքներն ու պնդումները, թե իբրև հայերենի կետադրության առանձին նշանները (վերջակետ, միջակետ, ստորակետ, բութ) խոսքի հյուսվածքում երբեմն չեն տարբերակվում և ազատորեն փոխանակում կամ փոխարինում են միմյանց:

3. Ոչ միայն տեսականորեն չեն հիմնավորվել, այլև գործնական կիրառություններով չեն ընդհանրացվել հայերենի կետադրության համակարգում նոր նշանների հավելումները. միջակետ-գիծ (.-), ստորակետ-գիծ (,-) և վերջակետ-գիծ (:-), զուգադիր կիրառությունները կետադրության առանձին-առանձին նշաններ համարելը, որովհետև դրանք նույն անջատման գծի տարբեր կիրառություններն են՝ զուգադիպած տրոհության նշաններին:

4. Հայերենի կետադրության համակարգում եղած բոլոր նշաններն ունեն իրենց հիմնավորված կիրառությունները, քանզի բոլոր նշանների բոլոր կիրառությունները որոշակի են ու կանոնարկելի: Հետևապես անտեղի են այդ ուղղությամբ եղած տարակարծություններն ու տարակուսանքները, թե իբր հայերենի կետադրության նշանների կիրառություններն անվերահսկելի են: Կարծում ենք՝ ժամանակն է, որ ինչպես ուղղագրության հարցով է արված, կետադրության կիրառությունների միասնականացումը նույնպես դառնա պետականորեն հանձնարարելի պահանջ:

Անշուշտ, իբրև երկարամյա մանկավարժական փորձի ընդհանրացում, մենք ունենք հայերենի կետադրության յուրաքանչյուր նշանի մասին որոշակի առաջարկություն, բայց դա թողնում ենք այլ աղիթի:

Х. С. МНАЦАКАНЯН - К проблеме пунктуации в армянском языке.-

Хотя в армянском языке имеется довольно стройная, богатая, принятая в широком обиходе система пунктуационных правил, однако пока разносторонне не изучены все принципы употребления знаков препинания. Некоторые из них выходят за пределы единой системы, следовательно они не унифицированы, что и становится порой причиной вариативности знаков препинания и проистекающих отсюда разногласий.

В статье предлагаются пути к объединению всех пунктуационных правил армянского языка в единую систему.